

րեքայ եւ առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Դաւիթ եպիսկոպոսի»⁸ :

Իսկ Մեծ Անապատին մէջ մնաց Սարգիս եպիսկոպոս, իբրեւ «Հայր անապատին» . վախճանեցաւ 1620ին : Իր յաջորդն եղաւ Շամբեցի Արիստակէս վարդապետ «որ եղեւ առաջնորդ նոյն մեծ Անապատին եւ անդ եկաց մինչեւ ցվախճան կենաց իւրոց եւ անդէն թաղեցաւ» (Դաւր. 253) :

Արիստակէս վարդապետ, որ Մովսէս կաթողիկոսի ձեռնասուն աշակերտն էր, վախճանեցաւ իբր 1638ին : Էջմիածնի Թ. 2608 ձեռագիրը, զոր յիշեցինք վերը, գրուած է 1635ին Արիստակէս վարդապետի խնդրանքով : Յիշատակարանն է. «Գրեցաւ սուրբ զիրս առ ստորոտով յերկիրն Որոտան ի գիւղն որ կոչի Շինահայր, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի, յառաջնորդութեան տեսոն Փելիպպոսի, որ բարունական գաւազանաւ եւ բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերում ժողովրդեան»⁹ . . . յամի ՌՁԴ թվական : . . . Վարդապետն մեր Արիստակէս . . . ետ դժաւրել զսա ի վայելումն անձին իւրոյ . . . յիշեալիք . . . զեղիկի զծաւղս զՅովհաննէս . . . զաւժընդակիչ եւ զյորդորիչ զվարդապետն իմ զԱստուածատուր քահանայս . . . » (Թղ. 436բ) : Նոյն Արիստակէս վարդապետի համար գրուած

⁸ Բարխուդարեան, Արցախ, 144. Թօփճեան, Յույակ, Բ., 46 :

⁹ Էջմիածնի Թ. 1678 ձեռագրին մէջ տողերս գրուած են Մովսէս կաթողիկոսի մասին. տե՛ս վարը, էջ 196 :